ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՅՈՒՆԻՍ 15, 1895. ԹԻՒ 11 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 98

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York N.Y. Vol. V, 1895.



NUBAR PACHA (Armenian) Premier of Egypt. ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" եւն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
կանխիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Նուպար Փաշայի.—
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ
Ա. Ոչ գիր այլ մարդ կ'ուզեմք
Բ. Վիգթորիա Թագուհին և Հայք
Գ. Նուպար փաշա
Դ. Հնչակ և Սասունցիք
Ե. Անգլեհայկական Ընկերակցութիւնն
Զ. Նոր ոյժ մ'ալ
Է. Առ Ընթերցողս—
Սասունցի Դիւցազն մի.— Նշխարք Սասունցւոց բանաստեղծութեան.— Բարեկարգութեան Ծրագիրն Սուլթանն կը մերժէ.— Հայոց Համաժողով ի Բարիզ.—Փակե՞նք մեր բերաններըն.—Նամակ Կ. Պոլսէ.— Նամակ Կ. Պոլսէ.— Նամակ Կ. Պոլսէ.— Նամակ Եգիպտոսէ.— Նամակ Բարիզէ.— Նամակ Բաղէշէն.— Այլևայլք։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

ՈՉ ԳԻՐ ԱՅԼ ՄԱՐԴ Կ'ՈՒԶԵՄՔ

Համիտ մերժած է տէրութեանց ծրագիրն։ Զարմանք չէ այս։ Թուրքն 10,000 անմեղաց արեամբն գինւով՝ կը զառանցէ ցնդած ցնորած։ Թրքի արիւնաթաթաւ թուշն զա'ն պարտէր ըմպել, բայց զօրութիւնք յոյժ կակուղ մի ծրագիր մատուցին նմա, և նա, մեծ խալիֆ և փատիշահ, կը մերժէ զայն՝ մերժած լինելու հաճոյքին համար— ոչ թէ անընդունելի բան մի կայ սնամէջ ծրագրին մէջ, որպիսին կրնար Դուռն ալ պատրաստած լինիլ, այլ զԵւրոպիոյ tutelage սկզբամբ խոտած լինելու համար։

Եւ մեք Հայքս գոհ եմք այդ խօլ մերժման համար։ Մեք ամոքիչ բալասան չեմք ուզեր մեր մահաբոյր վիրաց, և ոչ դիւրացնդիկ թմրեցուցիչ մեր ցաւոց։ Խաբէական երեւոյթք այլ ևս չեն բաւեր զբօսցունել մեր դառն անհամբերութիւն։ Չեմք ուզեր որ բանտք պարպուին այսօր, նորէն լեցուելու համար վաղիւ։ Տէրութիւնք թող ժամանակ չկորուսանեն թղթի վերայ երկարօրէն կրկնելու համար վաղածանօթ բարեկարգութեանց շարքն, այլ թող կարգեն փութով մի եւրոպացի փոխարքայ որ յանուն Եւրոպիոյ և օգնութեամբ Եւրոպիացի և բնիկ օգնականաց, ի գործ դնել սկսի բարեկարգութիւններն։ Փոխարքայն պէտք է Եւրոպիոյ լինի պատասխանատու և Եւրոպա երաշխաւորէ Սուլթանին հատուցուելու տարեկան տուրքն Հայաստանէն։

***

ՎԻԳԹՈՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ ԵՒ ՀԱՅՔ

Նորագոյն լրոյ քան զամենայն ուրախալին է այն թէ Նորին Վեհափառութիւնըն ՎԻԳԹՈՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ ևս Հայոց դժոխմբեր վիճակին ծանօթացած և յուզուած է խորապէս, և, ինչ որ բոլորովին արտասովոր բան է, խրատ և մինչև իսկ հրահանգ կուտայ իւր կառավարութեան Հայկական խնդրոյն վերաբերութեամբ։ Թագուհւոյն այս ջերմ հոգածութիւնն աներկբայ պիտի յարուցանէ Անգլիոյ հանրային կարծիքն աւելի հզօրապէս Թրքաց դէմ և Բրիտանական կառավարութիւնն պիտի յառաջ երթայ, թէպէտ միայն միայնակ, Թրքի լուծն խորտակելու համար Հայաստանի պարանոցէն։

***

ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ

Եգիպտոսի հայ նախարարապետն մին է մերազնեայ աշխարհահռչակ այրերոյն զորըս մերթ ընդ մերթ կը յիշեն գրողք երբ մեր ցեղին ընդունակութեանց վերայ կը խօսին։ ՆՈՒՊԱՐ Փաշա բոլորովին օտար չէ Հայկական Դատին, զի, ի խնդրոյ Ներսէս Պատրիարքի, յօրինած է նա 1878ին մի ուրուագիծ բարեկարգութեան որում յաճախ կ'ակնարկեն հեղինակք։ Մեր Աղեքսանդրիոյ թղթակիցն կը ծանուցանէ Նորին Վսեմութեան ուղեւորութիւնն յԵւրոպա, և իրաւամբ կրնան հայ հայրենասէրք ինչպէս նաև օտար մարդասէրք սպասել որ

հայ դիւանագէտն ալ բան մ՝անէ ի յաջողութիւն հայ խնդրոյն։ Թէ ինչ կարող է անել մի մարդ որ գործօն քաղաքական ծառայութեան մէջ է, այդ մեզ անկ չէ թելադրել։ Եթէ Նուպար Փաշա կը կարեկցի իւր ցեղակից ժողովրդի անհուն վշտաց, ինչպէս կը յուսամք թէ կը կարեկցի, ինքն կարող է որոշել թէ ո՞րն է պատեհ եղանակն որով կարող է հայ դատին ծառայութիւն մի մատուցանել ներկայ պատմական ճգնաժամում։

***

ՀՆԶԱԿ ԵՒ ՍԱՍՈՒՆՑԻՒ

Սասունցի դիւցազն ՊԵՏՐՈՍԻ հարցաւոմն ի Լոնտոն թէ տեսա՞ծ էր յեղափոխական գործիչներ։ Այո՛, պատասխանեց Տ. Պետրոս, տեսանք զմուրատ, որ կ՝ասէր թէ պէտք է դէմ դնել Քրդաց յարձակմանց, և մեք նմա պատասխանեցինք, Աղբար, դու մեր մէջ ի՞նչ գործ ունիս, մեք արդէն համոզուկ եմք, մեք աւազակ Քուրդ չատենք ոպաններ, գնա քաղաքաց և Ստամպօլի վախկոտ Հայոց տուր զքո քարոզ։

Զայս մեզ պատմող անձն, որ կատարեալ վստահութեան արժանի ոք է, հասկացած է թէ Սասնոյ կոտորածն չէր լինէր եթէ երկու կամ երեք յեղափոխական այցելուներ այդ քաջաց գաւառին մէջ աւելորդ փորձեր արած և փորձանք բերած չլինէին։ Քրդաց և Հայոց մէջ ամեն տարի ընդհարմունք կը պատահէին՝ առանց կայսերական կառավարութեան ուշն գրաւելու, բայց երբ իմացուած էր թէ մի կամ երկու յեղափոխական երիտասարդներ մտած էին ի գաւառն, կառավարութիւնն պատեհ պատճառանք գըտեր է բոլոր գաւառն ապստամբ նկատելու և ջարդելու։ Զոհքն կատարելապէս անմեղ էին, և ոչ միայն անմեղ այլ և բարի, քաջ, առաքինի, պարզ, բնութեան հարազատ որդիք, որոց իւրաքանչիւրն բիւր քաղքցի կ՝արժէր։ Հայ Ազգի երիտասարդութիւնն ամենախորին սգով լեցուած է, և եթէ արդարութիւն չլինի Հայոց, վրիժառութեան ոգին պիտի պայթի և հրդեհէ բովանդակ Արեւելքն։

***

ԱՆԳԼԵՒՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Խորին երախտագիտութեամբ կ՝արձանագրեմք այդ մեծ և հզօր ընկերութեան անունն, որ անդուլ և անձնուէր ջան ի գործ կը դնէ յօգուտ հայ դատին։ Մեզ հասած նորագոյն և արժանահաւատ տեղեկութեանց համեմատ՝ այդ ընկերութիւն քաջ դիւանագիտութեամբ կը վարի և բարեկարգութեանց առաջարկեալ ծրագրին թերութեանց լրումն կը պահանջէ ազդեցիկ միջոցներով։ Այն հայ հայրենասէրք որք իրենց լումաներն յղեցին այդ ընկերութեան, կրնան ուրախ լինիլ թէ վստահելի ձեռքերու ոյժ տուած են ըստ կարի։

***

ՆՈՐ ՈՑԹ Մ'ԱԼ

Քէնըն Մաբ Քօլ մի տետրակ հրատարակած է Անգլիոյ պատասխանատուութեան վերայ, որ հզօր փաստաբանութեամբ կը ջախջախէ Թուրք դրութիւնն և կը ցուցնէ թէ ինչ հարկ է անել Հայաստանի համար։

***

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Անստորագիր նամակներ մեզ յղելու զուր յոգնութիւնն կրողներ չեն պակսիր հակառակ լրագրական ծանօթ կարգաց։ Այս անգամ առինք Գահիրէէն կեղծ ստորագրութեամբ թղթակցութիւն մի որ առաջնորդ իւթիւճեան Հօր դէմ կատաղի յարձակում մ'է։ Գուցէ առաջնորդն է այնպէս վատոգի պահպանողական և ապիկար որպէս կը պատկերէ զնա թղթակիցն, սակայն որովհետև հեղինակն իւր ճշմարիտ անուն մեզ յայտնած չէ չեմք կարող հրատարակել նամակն։ Երբեմն մեզ հարկ կը լինի թղթակցի մի նկատմամբ տեղեկութիւն խնդրել ուրիշէն։ Ցաւալի է խոստովանիլ թէ մերթ ընդ մերթ անզգոյշ և անբարեխիղճ թղթակիցներու հանդիպած եմք։ Երբ մանաւանդ այս գործիչի կամ այն ազգային պաշտօնէի դէմ գրուած մի կը տողէ ոք, պարտի ինքզինք ներկայացնել խմբագրին ճիշդ անունովն։ Խմբագրին պարտքն է ոչ թէ միայն չխաբել այլ և չխաբուիլ։

Ցաջորդ թիւէն սկսեալ կը դադարիմք յղելէ զՀԱՅՐ անո՛նց որք չհաճեցան վճարել ներկայ տարւոյ երկրորդ վեցամսեային համար։

Խմբագրութիւնս աւելորդ կը համարի կրկնել ՀԱՅՐի հրատարակութեան ահագին նեղութեանց մասին ինչևիցէ յայտարարութիւն։ Եթէ պարտաճանաչ երիտասարդներ կան, արդէն ասուածն կը բաւէ։

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԻՒՑԱԶՆՄԻ

Այն փախստական Սասունցի երիտասարդն որ ՊԵՏՐՈՍ անունով կը կոչուի և իւր կնոջ հետ ի Լոնտոն եկած էր, տիպար մ'է մեր հին դարու դիւցազանց։ Պատ. Կրին որ նորա հետ մի քանի շաբաթ սերտ յարաբերութեան մէջ գտնուեցաւ ի Լոնտոն, կենդանի շրթամբ և խորին սքանչանօք նկարագրեց մեզ Տիար «Պետրոսի» գերազանցութիւններն, և ասաց «Ես շատ երջանիկ կը համարիմ զանձն իմ որ կրցայ ճանաչել զՏ. Պետրոս, զորոյ մեծութիւնն կրնամ բազդատել Կլատսթոնի հետ, առանց կարենալ որոշելու թէ ո՞քան զս մեծագոյն է։»

Պետրոս, որոյ լուսանկարն տեսանք բայց հրատարակելու արտօնութիւն չունիմք, դեռ 26 տարեկան է։ Լոնտոնի մէջ ամեն տեսնողի զմայլական մտադրութիւնը կը գրաւէր նա իւր նշանաւոր դիմօք, մինչ միւս սասունցի երիտասարդին ոչ ոք ուշադիր կը լինէր։ Պետրոսի քաջագործութեանց պատմութիւնն պէտք է օր մի գրել երկար։ Նա կոտորածին ատեն պատմական գործեր կատարած է իբրեւ առաջնորդ և մարտնչող։ Քաջ հրացանաձիգ է, և քրդային նախամարտերուն ատեն քանի քանիներն գլորուած են նորա գնդակներէն սատակած։ Գիտէ գործածել նաև դաշոյն ծայրագոյն ճարտարութեամբ։ Իւր վերջին փախստեան պահուն ուրիշ բան չունէր արդէն բայց եթէ առիւծի սիրտ մի և դաշոյն։ Դժուարագնաց ափոփայից մէջ զօրքն պաշարած էին զինքն, և երկու զինուորք երկու թեւերէն բռնած էին մինչ երրորդ մի երեք չորս կանգուն հեռուէն հրացանն ուղղած՝ կրակելու վերայ էր երբ Պետրոս մի զարմանահրաշ շարժմամբ կը պրծէ իւր մէկ թեւ, կը քաշէ դաշոյնն և կը մխէ զայն բոլոր խորութեամբն աջ կողմի զինուորին ուսին՝ անրակին ետևի եռանկիւն միջոցէն վար։ Այս գործողութիւն կը կատարէ կայծակի արագութեամբ, և այդ հարուածն տալու պահուն հարկաւոր եղած շարժման շնորհիւ՝ զինուորին գնդակն Պետրոսի ստամոքսին առջեւէն կ'անցնի, զգեստն ծակելով և մորթն քերելով։ Պետրոս և իւր դաշունի հարուածին տակ ինկած զինուորն միասին կը գլորին սարէն վար, զօրքն կը կարծեն թէ երկուքն ալ սպաննուած են, բայց զինուորն միայն սատկած էր։ Պետրոս ուշաբերած՝ ձեռքովն իւր փոր կը զննէ իմանալու համար թէ աղիքն դուրս թափա՞ծ էին արդեօք։ Ո՛չ։ Ուրեմն կը սկսի փախչիլ բազմաթիւ զօրաց մէջէն, ընդունելով գնդակի երկու հարուածներ իւր սրունից, բայց կը յաջողի հասնիլ ապահով վայր մի, քաղցած՝ ուժասպառ և արիւնաթաթաւ։ Բարեբաղդաբար ուրիշ հայ փախստականաց կը հանդիպի, որք սնունդ կը հայթայթեն դիւցազին որ չի մեռնիր սպառումէն։

Տիար Պետրոսի կինն, յոյժ դեռահաս, որ ևս հրաշիւք իմն պրծած էր հալածող զինուորաց ձեռքէն, և յետոյ գտած էր յանկնկալս իւր ամուսինն ի Խնուս, արժանաւոր կինն է այդպիսի դիւցազին։ Երբ նա կը ներկայացուէր ի Լոնտոն ազնուական լէյտիներու կամ իշխանուհեաց, պարզ և անգիտակից վեհանձնութեամբ կը վարուէր իբրը իշխանուհի սմն։ Անոր վերայ երբէք չէր տեսնուէր հասարակ և անկիրթ կնիկներու տխմար և ստոր կերպարանն կամ վարմունքն։

Եւ պէտք է յաւելուլ թէ Սասնոյ Հայոց մէջ դիւցազունք և դիւցազնուհիք շատ են։ Այդ լեռնային գաւառի մէջ պահուած է Հայութեան ազնուագոյն նմոյշն յօրինակ և ի քաջալեր մեր ազգին և բովանդակ մարդկութեան։

ՆՇԽԱՐՔ
ՍԱՍՈՒՆՑԻՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ

Սասնոյ ժայռերու ետևէն աւերակներն դիտելով մորմոքող փախստականք, ողբեր են յօրինած բնիկ հայկական գեղեցկութեամբ և ճշմարիտ բանաստեղծական ոգւով։ Պատ. Կրին, Տիար Պետրոսէ լսած լինելով, մեզ կրկնեց մի քանի տող, որ ահաւասիկ։—

Բագրանցիք ինկաւ հաւար,
Պարգանցիք ինկաւ հաւար,
Հայեր փախան Անտուք սար, (կրկ.)
Մելքոն գաբարակ կոտրեցին,
Գրգոր Սեմալ վառեցին։
Շուն Համոյից (Համիտ) եկաւ լուր,
Շուն Համոյից եկաւ լուր։
Հայեր գացին վայու դուռ,
Ասաւ Հայեր քաշէք սուր։
Արիւն թափաւ առուի պէս, (կրկ.)
Ժանտակ (դիակ) ինկաւ ձկան պէս։
Դուն մ'ասեր այս բան վատ է (կրկ.)
Աստուած Տաճկու զօրք դատէ։

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՆ

ՍՈՒԼԹԱՆՆ ԿԸ ՄԵՐԺԷ ԵՐԵՔ ՏԷՐՈՒԹԵԱՆՑ ԾՐԱԳԻՐՆ

Յունիս 4ին հեռագրեցին Կ. Պոլսէն ի Լոնտոն թէ Դուռն այն օր յանձնած է իւր պատասխան Անգլիոյ, Ռուսիոյ և Ֆռանսայի միաբան առաջարկին՝ վերաբերութեամբ Հայաստանի։ Թղթին բովանդակութիւնն գաղտ կը պահուի, սակայն այսչափ ինչ դուրս ելած է թէ պատասխանն անգոհացուցիչ է բողոքող տէրութեանց, ըստ որում Թուրքիա կ'առարկէ առաջարկուած Եւրոպական վերահսկողութեան ի վերայ Հայաստանի։

Վիէննայէն ալ կը հեռագրեն թէ այդ պատճառաւ նաւային ցոյց մի պիտի անեն Պոսֆորի վերայ երեք տէրութիւնքն։

Անգլեհայկական Ընկերակցութեան ևս հեռագիր եկած է Դրան պատասխանին անգոհարար բնութիւնն ծանուցանող, և թէ Ֆռանսական ու անգլիական մարտանաւեր կը սպասուին ի Պոսփոր ժամանել յաջորդ օրն։

Սթանտարտի Պոլսեան թղթակիցն կը վստահի ասել թէ Դրան ծանուցագիրն ետ պիտի յղուի և թէ տէրութիւնք պայմանաժամ մի պիտի նշանակեն յորում պէտք է ստանան պարզ և անպայման որդեգրումն իրենց առաջին ծրագրին։ Սթանտարտն այս առթիւ կ'ասէ. «Կացութիւնն վերջին աստիճան ծանր է. Եւրոպայի հետ խոստումներով այլ ևս խաղալու ատեն չէ։ Սուլթանն պարտի ընդունիլ տէրութեանց յանձնարարութիւններն և կամ, ինչ և լինին հետեւութիւնք, Հայաստան պիտի բաժնուի Օսմանեան կայսրութենէն։»

«Բրօնիքլ» կ'ասէ. «Եթէ ասիական աղմկոտութեան խաղ մի չէ զոր Սուլթանը կը խաղայ, պարտիմք մեք մեզ գոտեպնդել ի գործ։»

«Ն. Ե. Ուօրլտ» կ'ասէ.— Եւրոպական տէրութիւնք չատ չափաւորութիւն և մուռ ցոյց տուին խողխողման և անգթութեան այդ բռնաւոր և քայքայուող ապաստարանին հետ վարուելու ատեն։ Իսկ նա այսպիսի մարդավարի վարմունքի կը պատասխանէ մերժելով չափաւոր և հարկաւոր ծրագիրն քան զոր քիչն պահանջել անհնար էր։ Այս մերժում կը թողու տէրութեանց միւս հնարաւոր ընթացքն, այն է Թուրքիոյ կռնծելու ձեռքէն առնուլ զինդիրն։»

Յունիս 6ի հեռագրի մի համեմատ՝ Արտաքին Գործոց Նախարարն կրկին և կրկին այցելեր է անգլիական դեսպանին յորմէ հետէ Դուռն տուաւ իւր պատասխան առ տէրութիւնն։ Կը յուսան թէ Սուլթանն պիտի ընդունի ինչ որ անխուսափելի է։

ՀԱՅՈՑ ՀԱՄԱԺՈՂՈՎ Ի ԲԱՐԻԶ

Մայիս 25ին, որպէս կը պատմէ առ «Թայմզ»ուղղեալ հեռագիր մի, Եւրոպիոյ հայ ընկերակցութեանց պատգամաւորներու խորհրդակցութիւն մի տեղի ունեցաւ ի Բարիզ։ Ներկայ էին ներկայացուցիչք Բարիզէ, Մարսիլիայէ, Վառնայէ, Լոնտոնէ, Վիէննայէ, Անթուէրբէ և Պրուքսէլէ։ Տ. Յ. Իսկէնտէր, Բարիզու Հայրենասիրական ընկերակցութեան նախագահն, ատենապետ ընտրուեցաւ, և յայտարարեց ժողովոյն թէ ամենաբարձր հեղինակութենէ ունէր ստուգութիւն թէ Տէրութեանց առաջարկութիւնք զուրկ էին երաշխիքէ։ Համաժողովն կոչուած էր որպէս զի մինչ ժամանակ կար յայտարարութիւն մ'անէին։

Տ. Սարրեան (Անթուէրբէն) առաջարկեց որոշում մի ընդդէմ այլ ևս Դրան ո և է խոստումն ընդունելոյ և որ Պէրլինի դաշնագիրն ստորագրող Տէրութեանց դիմում լինի, որ յօգուտ խաղաղութեան, ի չահ թուրք կառավարութեան և ի նպաստ Հայոց միանգամայն, իրենք ընտրեն Եւրոպական բարձր յանձնակատար մի վասն հայ գաւառաց։ Այս որոշում միաձայնութեամբ ընդունուեցաւ։

Տ. Մինասեանց (Բարիզէ) առաջարկեց հետեւեալն— Այս համաժողով կ'արձանագրէ իւր երախտագիտութիւն առ Մամուլն, մասնաւորապէս Մեծին Բրիտանիոյ, այն խոր համակրութեան համար զոր ունին Հայկական Դատին համար, և կը խնդրէ նոյնին շարունակումն, պնդելով Եւրոպական երաշխեաց անհրաժեշտ հարկին վերայ, քանի որ Բարիզի և Պէրլինի դաշնագիրներէն յետոյ, ի չգոյէ այսպիսի երաշխեաց, Թուրքիոյ քրիստոնէից վիճակն վատթարագունի փոխուած է։

Այս առաջարկ ևս միաձայնութեամբ ընդունուեցաւ։

ՓԱԿԵ՞ՆՔ ՄԵՐ ԲԵՐԱՆՆԵՐՆ

Այն Հայք որք տեղեակ են ելեմտական անգոհացուցիչ վիճակին հայ մամլոյ, ցաւով կ'ստիպուին յաճախ հարցնել թէ արդեօք հայ ժողովրդեան բաղձա՞նքն է փակել իւրեանց բերաններն, փակել այն լրաթերթերն որք նախանձախնդիր պաշտպանքն են իւր շահուց և ճշմարիտ թարգմանք՝ իւր զգացմանց։ Արդեօք Հայ Ազգն չի՞ գնահատեր զկարեւորութիւն ազգային մամլոյն՝ որ կը թերանայ տալ այնմ հարկաւոր բարոյական և նիւթական ձեռնտուութիւն։ Դժբաղդաբար, ինչևիցէ հայ ժողովրդեան իրական զգացմունքն այս մասին, յայտնի իր մ'է թէ այն մշակեալ և ազգասէր Հայք որք կը ծառայեն ազգին իւրեանց թերթովք, փոխանակ ընդունելու մի արժանաւոր վարձատրութիւն, կը ճնշուին պարտուց տակ և ենթակայ են դադարման վտանգին։ «Հայրենիք» և «Արեւելք», նշանաւոր թերթքն ի Կ. Պոլիս, ուր մէկ քառորդ միլիոն հայ ժողովուրդ կայ և «Արձագանք» և «Մշակ» ի Թիֆլիս ուր ոտուար հայ բնակութիւն մի կայ, հազիւ կարող են իւրեանց կեանքն շարունակել։ Նմանապէս արտասահմանի մեր կարեւոր թերթք որք ազատաբար կը խօսին մեր խնդրոյն վրայ, միշտ գրեթէ ըսպառնալեաց տակ են։ Մեք չեմք կարծեր թէ ժողովրդեան փափաքն է մղել այս կենսական բերաններն ի կորուստ, սակայն կը կարծեմք թէ այս ցաւալի վիճակին մի պատճառն է ժողովրդեան տգիտութիւնն կարօտութեանց լրաթերթից։ Բաղձալի է որ մեր ժողովուրդն նպաստէ բոլոր այն հրատարակութեանց որք կը ծառայեն իւր շահուց, սակայն մեք տեղեակ լինելով մասնաւորապէս «Հայքի», կարօտութեանց կ'ուզեմք մասնաւոր և ստիպողական կոչում մ'անել առ մեր հայրենասէրս ի նրպաստ սոյն լրաթերթի։

«Հայք» լրաթերթն եզական արժանիք մ'ունի ազատ հայ մամլոյ մէջ քանզի չկայ պլ մի թերթ որ ունենայ նման հանգամանք և քանզի «Հայքի» նման թերթ մի է մի կարեւոր անդամ մեր մամլոյն։ «Լառմէնի» Եւրոպիոյ ուշն կը հրաւիրէ Հայոց ընթացիկ վիճակին, «Արմէնիա» լուր կը հաղորդէ, «Հնչակ» և «Դրօշակ» յեղափոխական ձայն կը հնչեցնեն, սակայն «Հայք» կը նուիրէ զիւր էջերն հիմնովին ուսումնասիրելու մեր խնդիրն և կը թելադրէ լուրջ խորհուրդներ նկատմամբ մեք պարտուց և գործունէութեան։ Այս լրաթերթն, որ նաև հանդէս մ'է, անցեալ հինգ ամաց միջոցում մեծ ծառայութիւն մատուցած է ազգին մերթ լուսաբանելով մեր ժողովրդեան պէտքերն, և մերթ ազատօրէն քննադատելով մեր թերութիւններն։ Մանաւանդ այն զօրաւոր թափ որ ուաւ միութեան խնդրոյն, պնդելով կազմակերպութեան հարկին վրայ։ Մեք չեմք կարծեր թէ այն երբէք կը յաւակնի զինքն իբրեւ կատարեալ ներկայացնել։ Ամեն թերթ ունի իւր տկար որպէս զօրաւոր կողմն և մեզ կը վայելէ որ ներողամտութեամբ դատեմք։ Այսպիսի ոգւով նկատելով ամեն Հայ կրնայ տեսնել թէ «Հայք» թերթն ունի մի այնպիսի կարեւորութիւն որ նորա դադարումն, եթէ այս լինի հետեւանքն մեր անտարբերութեան, պիտի լինի մի ազգային անդարմանելի կորուստ։

Այն անձինք որ դիտեցին «Հայքի» ելեմտական տեղեկագիրն նախորդ թուոյն մէջ պիտի համոզուին թէ որքան անձուկ է նորա նիւթական վիճակն։ Ի Ֆիլատէլֆիա, Ռուսթըր և Պոսթօն ուր կան ըստուար հայ գաղթականք բաժանորդաց թիւն յոյժ աննշան է։ Հիմայ ժամանակ է այդ ազգայնոց նպաստել մի ազգային լուրջ թերթի իւրեանց բաժանորդագրութեամբ։ Մեք ինչպէս կը պառամք թէ կրնամք սա և նա անել, Հայաստան ազատել, Թուրքիա տապալել և այլն մինչդեռ մի կարեւոր թերթ ապրեցնելու անփոյթ կը գտնուիմք։

Եթէ հայ ժողովուրդն և հայ հայրենասիրութիւնն որ գիտակից է «Հայքի» կարեւորութեան չուզեր դադարման դատապարտել այս իւր ջերմ պաշտպանն և կարող բերանն, մանաւանդ արդի տագնապում, պարտաւոր է ըստ կարի հանգանակել «Հայքի» ծախուց և նորա ելեմուտքն դնել հաստատուն հիման վրայ։

ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ

Ոմանք տոլար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորսուի։ Պէտք է կա՛մ Բէճիսթըր անել նամակն կամ մընի օրտըր յղել առ ի ապահովութիւն։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, Մայիս 1895

Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարարը Թուրքիոյ Պետրսպուրկի դեսպանին ըսած է «Զարն դիտելկուտայ թէ Թուրքիա չգործադրեց Ֆիլհանէի Դաշնագիրն, չի գործադրեց նաև 56ի Խաթթը Հիւմայիւնը, Պօսնիոյ և Հէրսէկովի ապստամբութեան առեն՝ այդ գաւառներն պահելու համար սահմանադրութիւն հրատարակեց որ քանի մ'ամսուան կեանք ունեցաւ։ Այ-Ստէֆանօյի 16դ և Պէրլինի 61դ յօդուածներն չգործադրուեցան։ Կիրիտի դաշնագիրը չյարգեց, եւրոպական մեծ կառավարութեանց պարբերական շրջաբերականները ու դիտողագրերն վասն քրիստոնեայ հպատակաց հանգստութեան՝ առ ոչ ինչ համարեց, և վերջապէս մեծ ջարդ մը տուաւ Սասունի Հայ քրիստոնէից, այս ամենամեծ ցաւ պատճառած է Զարին, և բարեկամաբար խորհուրդ կուտայ Սուլթանին իւր Ասիական արևելեան գաւառաց համար իրեն մատուցուելիք ծրագիրը ընդունիլ ամբողջութեամբ։»

Հայրիկ՝ որ մինչ Նոր Նախիջեւան գընաց, սակայն Զարին ներկայանալէ յուսակտուր, մտադիր էր վերադառնալ յէջմիածին, ճամբայ ելած է դէպ ի Պետրսպուրկ։ Էջմիածնայ թղթակիցս ինձ կը գրէ թէ՝ չտեսնուած շուքով պիտի ընդունուի Զարէն։

Ռուսիոյ կայսրն որոշած է Հայոցս նըպաստաւոր ըլլալ, ռուս աւագանին համակիր չէ կայսեր այս ընթացքին,— ռուս թերթերն կատղած են անգլիացւոց դէմ և եթէ յանդգնին պիտի քննադատեն Զարին ծրագիրն։

Տեղէս վատ հայ մի ղրկուած է ի Կովկաս Հայրիկն սպաննելու նպատակաւ, վըրիպած է ոճիրն, և ոճրագործը ձերբակալուած։ Կ'երեւի թէ՝ այդ միջադէպ Զարին բարկութիւնն գրգռած է ընդդէմ Սուլթանին և որոշած է ընդունիլ Հայրիկն և նպաստել Հայոց։

Սուլթանն վերջերս Արթին փաշան կանչելով կը հրամայէ որ վերջ տայ Հայկական Խնդրոյն— Արթին իւր անկարողութիւնն կը խոստովանի— ուստի ի՞նչ ընեմ կ'ըսէ Սուլթանն, հարկ է որ այս խնդիրն վերջանայ— լռութիւն— Սակայն ըսէ՛, Արթի՛ն, տա՞մ Հայոց պահանջն— կ'աղաչեմ, Տէ՛ր Արքայ, չեմ կրնար պատասխանել այդպիսի մի հարցի— Սակայն կ'ուզեմ որ խօսիս և ինձ խորհուրդ տաս —գթացէք Տէր, և մի պահանջէք յինէն այդպիսի փափուկ խնդիրներ, որոց Դուք միայն կարող էք լուծում մը տալ—Սուլթանն բարկանալով կ'ըսէ, ազատ ես, խօսէ, կը հրամայեմ որ ըսես, թէ ինչ լուծում տալու է—Արթին փաշա կարկամելով կ'ըսէ «Տէր արքայ, ընդդէմ Ռուսիոյ պատնէշ մը օգտակար կրնայ ըլլալ մեր տէրութեան»— Սուլթանն կատաղելով կ'ըսէ, դու, դու ալ այդ խելքն կը կրես ու երազն կը տեսնես, կորսուէ զընայ...։

Պէշիկթաշի կառավարիչն Հասան փաշայ, նմանօրինակ տեսակցութիւն մի կունենայ Սուլթանին հետ, և այժմ աներեւոյթ է, ըստ ոմանց անգլիա անցած է։

Թուրք երիտասարդութիւնն յանչափս գրգռեալ է ընդդէմ Սուլթանին։ Վերջերս Սուլթանին գահի քովէն սպառնական նամակներ գտնուեցան։ Սուլթանն կատղած է։ Պալատի մէջ իսկ Սուլթանի սպանման փորձ մը վիժած է։ կասկածելիներն կախուած են անմիջապէս։

Թուրք ժողովուրդն գրգռեալ է Հայոցս դէմ։ Իմամներ՝ հաւանականաբար կառավարութեան ներշնչմամբ՝ Հայոց հետ սիրով վարուելու քարոզներ կը խօսին։

Հայ երիտասարդութիւնն մեծ ցաւ կը զգայ Ֆռանսացւոց ընթացքին դէմ—այնչափ գանած է որ խորհուրդ կ'ընէ այլևս Ֆռանսերինի ուսուցման դադար տալ յԱզգային վարժարանս. շատեր սկսած են Անգղիերէն ուսանիլ։

Ազգ. Հիւանդանոցին հոգաբարձութիւնն արտաքսեց վերջերս Սատրազամին մասնաւոր յանձնարարութեամբ ազգային հիւանդանոցի մէջ կարգեալ մի Հայ պաշտօնեան։

Անգղիոյ, Ռուսիոյ և Ֆռանսայի տեղւոյս դեսպանաց, աստ վասն Հայաստանի արեւելեան գաւառաց բարեկարգութեան պատրաստած ծրագիրն՝ որ մեզ նպաստաւոր կարեւոր փոփոխութիւններ կրեց յԵւրոպա, աստ հասած է մի եօթնակէ ի վեր։ Սակայն Սուլթանին մատուցու-

մըն յետաձգուած էր ընտոնէն հասած մի հեռագրի վրայ։ Կ'ըսուի թէ այդ ծրագիրըն այսօր Սուլթանին պիտի ներկայանայ։ Զգիտեմք ծրագրոյն պարունակն ամբողջովին, գիտեմք միայն թէ շուրջ 60 յօդուածներէ բաղկացեալ է և մեզ նպաստաւոր է։ Հաւանականաբար Հայկական նահանգն Turquie Asiatique Orientale անունն պիտի կրէ, ընդհանուր կառավարիչն Եւրոպիոյ հաւանութեամբ պիտի ընտրուի, որ պիտի ունենայ Եւրոպացի խորհրդականներ, և եւրոպական հսկող մարմին մը։ Դատավարութիւնք ըստ Նուպար փաշայի եգիպտական ծրագրոյն պիտի կատարուին։ Ոստիկանութիւնն Տեղւոյն տարրերէն պիտի առնուի։

Ծրագրի տրուելն ուշացուելուն պատճառն՝ Լոնտոնի Անկլօ-Հայկական միութեան ներշնչմամբ եղած է, որ ծրագիրն անբաւական համարելով՝ բարեփոխումներ առաջարկած է, որոյ մի մասն միայն ընդունուեր է։

Տեղւոյս քրիստոնեայ տարրերն Ցոյնք, Պուլկարք շատ կը համակրին մեր ընթացքին և կը ջատագովեն մեր Պատրիարքի ընթացքն։ Պուլկարաց թերթերն առաջնորդող յօդուածներ կը գրեն Հայկական խնդրոյն մասին և զմեզ իրենց եղբայրներն կ'անուանեն։

Կ'ըսուի թէ՝ եթէ Անգլիացիք չյաջողին գոհացուցիչ լուծում մը ընդունիլ Հայկական խնդրոյ մասին, ոտքի պիտի հանենԱրաբիան · քաղցր է մեզ յուսալ թէ՝ գործն հոտ չպիտի հասնի։

Եթէ այս ամեն ջանքեր ի դերեւ ելնեն ընդհանուր յուզում մը յառաջ պիտի գայ, որոյ առաջին նշանն հաւանականաբար Կ·Պոլսոյ երիտասարդութիւնն պիտի տայ։

ԾՈՎ

ՆԱՄԱԿ Կ· ՊՈԼՍԷ

Կ·Պոլիս, Մայիս 23, 1895

Անցեալ շաբթու մոլեռանդ սոֆթաներ կ'առաջարկեն կառավարութեան Հայոց սոսկալի ջարդ մը տալ, կառավարութիւնն կը յաջողի անոնց 45 հատերն ծովայն յատակն ղրկելով փակել յուզումն։ Կ·Պոլսոյ և գաւառաց մէջ ի նպաստ Հայոց քարոզներ կը տրուին մահմեդականաց գրգիռն հանդարտեցնելու համար։

Սուլթանն վերջերս կը կանչէ ծովային նախարարն և կը հրամայէ որ զրահաւորներն պատրաստէ · Կ'աշխատին պատրաստել տիւ և գիշեր, այլ շատ ուշ է··· Կը կանչէ նաև գանձուց նախարարն և 200,000 ոսկի կ'ուզէ՝ հաւանականաբար ընդդիմութեան պիտոյից համար · Նախարարն գանձուց պաշտօնատուն երթալով կը վերադառնայ և կը պատասխանէ թէ գանձուն մէջ միայն 7,500 ոսկի կայ։

Եպարքոսն և արդարութեան նախարարն իրարու հետ մեծ կռիւ մ'ունեցած և ծեծկուած իսկ են։ Ըստ ոմանց պատճառն Հայկական խնդիրն է, ըստ այլոց կաշառքի խնդիր մը։

Պալատին մէջ իսկ Օսման և Տէվրիշ փաշաներն կռուած են Հայկական Խնդրոյն առթիւ։ Առաջինն ըսած է թէ «Ես 10 տարիներէ իվեր կը պնդեմ թէ Հայերը նեղելու չէ, ահաւասիկ հակառակին վտանգաւոր հետեւանքն։ Խոհեմութիւն է այժմ ծրագիրն ամբողջութեամբ ընդունիլ։» Տէվրիշ փաշա բարկութեամբ կը պատասխանէ— Օսմա՛ն, ո՛րչափ վճարեցին քեզ Հայերն։ փոխադարձ անարգանք։ Սուլթանն կ'իմանայ, և Օսման փաշա քանի մը օր կ'աներեւութանայ։

15ի չափ թուրք երիտասարդներ ալ աքսոր ղրկուեցան։

Սուլթանն Միքայէլ փաշային ալ խորհուրդ կը հարցնէ Հայոց խնդրոյն մասին · Միքայէլ փաշա Հայոց նպաստաւոր խօսելուն պաշտօնանկ կըլլայ · սակայն 9 ժամէն նորէն պաշտօնին կը վերակոչի։

Սեբաստիոյ մէջ պատերուն վրայ փակցուած գտնուեցան Թրքաց կողմանէ յայտարարութիւններ թէ իրենք հաշտ են Հայոց հետ, և գրգռիչն միայն կուսակալը է։

Այսօր Ս·Փրկչի Հիւանդանոցին տօնն է·Պատրիարք Հայրն կը պատարագէ անդ։ Այս տարի արգելք չկայ հոն երթալու, և բիւրաւոր Հայեր կ'երթան։ Երիտասարդք զինեալ են։ Նամակս կնքելով ես ալ պիտի երթամ։ Թուրք երիտասարդներն մեզ կը նախանձին և երանի ձեզ կ'ըսեն։

ԾՈՎ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷ

Կ․ Պոլիս, Մայիս 24, 1895

Երէկուան Ազգային Հիւանդանոցի տօնըն աներեւակայելի ազատութեամբ տօնուեցաւ։ Պատրիարք Հայրն յետ պատարագի շրջեցաւ հաստատութեան բոլոր յարկերն և հազիւ հանգստանալ ելած էր սրահն, բիւրաւոր բազմութիւն մը խըմբուեցաւ սրահի առջեւ, ամենն միաբերան կ'երգէին ազատ երգեր, կեցցէ՛ Հայրիկ, կեցցէ՛ Իզմիրլեան, կեցցե՛ն ազգային բարերարք աղաղակներով օդն կը թնդացնէին։ Լսուեցան իսկ կեցցէ՛ Հայաստան, կեցցե՛ն Սասունցիք և վերականգնի Հայաստան աղաղակներն։ Ժողովուրդն երթալով ոգեւորեցաւ, յերիտասարդաց ոմանք ազատ ատենաբանութիւններ ըրին, անմիջապէս թաշկինակներով դրօշակ մը պատրաստեցին որ վրան թղթէ մեծ խաչ մը կը կրէր․ յանկարծ շատերու գլուխն արախճիններ տեսնուեցան, զորս գաւազաններու ծայրն յօդս բարձրացնելով կեցցէ՛ հայկական գլխարկ գոչեցին։ Գոռում գոչումներ երթալով կը սաստկանային, Պատրիարք Հայրն զՀայր Գ․ Եր․ ղրկեց ժողովուրդն հանդարտեցնելու, երիտասարդք բազկաց մէջ առին զայն, յօդս բարձրացուցին և առաջարկեցին որ ատենաբանէ․ խեղճն հազիւ կրցաւ պրծիլ ձեռքերնուն։ Կէս օրին սեղանն կը սկսի, 200 ի չափ անձինք կը սեղանակցին պատրիարք Հօր, յորս և երեսփոխաններ, քաղաքական և կրօնական ժողովոց անդամներ, հոգաբարձութիւն և խնամակալուհի տիկնայք հիւանդանոցի, խմբագիրներ, ուսուցիչներ և շատ մը ազգային գործիչներ․ ի չարս բաժակաց չմոռցուեցաւ հայ ժողովուրդն։ Ժողովուրդն պաշարած էր սեղանատունը որոյ ապակիներն ու դռներն կոտրելով կը ձայնակցէին մաղթանաց․ սեղանն աւարտելուն ժողովուրդն երգեցիկ երիտասարդաց առաջնորդութեամբ պարտէզ գնաց, ուր 4—5 խմբերու բաժնուեցաւ․ մի մի խումբ կը բաղկանայ ատենաբաններու մարմինէ մը՝ որ խումբի կեդրոնն կը գտնուի, յորոց մին կանգուն կեցած կ'ատենաբանէ, սոքա բոլորեալ են 10 չափ երիտասարդներէ զորս կը շրջապատէ հարիւրաւոր ժողովուրդ, ունկնդիր և ծափահար։ Խօսուած ատենաբանութիւններու ոգին միշտ նոյն է, աւասիկ անոնցմէ մին «Շնորհիւ Վեհափառ Հայրիկին և Իզմիրլեան անձնուէր Պատրիարքին և աշխատակցութեամբ հայրենասէր գործիչներու և մանաւանդ Սասունցիներուն Սբ․ Արեան և Ձեր հայրենասէր գործունէութեան վերջապէս ապագայ Հայաստանի մը արշալոյսն կը ծագի, դեռ ամեն ինչ լրացած չէ, դեռ աշխատանաց պէտք կայ, կազմ և պատրաստ գտնուեցէք և պիտի վերականգնի Հայաստան, պիտի ապրի հայութիւնն։» Ատենաբանից ամեն նախադասութիւններն և նոյն իսկ մէն մի բառերն ժողովրդէն կեցցէներու աղաղակներ և որոտընդոստ ծափահարութիւններ կը խլէին։ Ատենաբանութիւններն երգերով կը վերջանային, երգերն ամենաազատներ էին, որպէս Ազատն Աստուած, Արիք Հայկազունք, Թնդաց Հիմանց, Հիմի է՞լ Լռենք, Հիմի էլ Խօսիմք, Թէ իմ Ալեւոր, Առնեմ Ջէնքերս, Սասունի նուիրագործեալ երգն են․։ Այս խմբումներ տեւեցին մինչեւ ժամ 9 (ը․թ․), յորժամ ամեն խումբեր միացան, սկսան երգելով շրջան ընել հիւանդանոցի պարտիզին մէջ և շուրջն, ամբոխն ստուարացաւ, ծառճիւղերով զինեցան, ծաղիկներով զարդարեցին իրենց գլուխներն ու կուրծքերն և երգելով վերադարձան ժամ 10ն անցած։ Ոստիկանութիւն ունէր իւր ներկայացուցիչներն՝ որք ժողովրդէն հեռի մնալու հըրաման ընդունած էին։ Հանդէսէն դարձողներն պատմեցին եղածն ժողովրդեան, յորոց շատեր չուզեցին իսկ հաւատալ․ բայց ես իբր ներկայ կը գրեմ զայս։

Այս ամեն նպատակ ունին պատրաստել ժողովուրդն մի մեծ շարժման, որ տեղի պիտի ունենայ եթէ Սուլթանն ամբողջութեամբ չընդունի առաջարկեալ ծըրագիրն։

Մի մեծ ցոյց տեղի պիտի ունենայ Սահմանադրութեան հանդիսին առթիւ։

ԾՈՎ

ՄՇԱԿի կը գրեն թէ Ալաշկերտի Քըրդերն սարսափում են Հայոց մօտալուտ ազատութեան մասին տարածուած լուրերով։ Նրանք պատրաստուում են թողնել հեռանալ և իրանց համար նոր հայրենիք գտնել եթէ լուրերն ճշդվին։

ՆԱՄԱԿ ԵԳԻՊՏՈՍԷՆ

Ալէքսանդրիա, 13 Մայիս, 1895

Տեղական մամլոյն յայտարարութեան նայելով քիչ օրէն Եգիպտոսի Նախարարապետ մեծանուն Ծերունին, Նուպար Փաշան, ընկերացած իւր փաշայ որդւոյն ու ընտանեացը, քանի մի շաբաթ արձակուրդի համար, կը մեկնին Եւրոպայ։

Բայց ... վա՜յ, սիրտս արոփել սկսաւ հիմակուանէ, սա «բայց»էս վերջը ըսելիքըս յանդգնական երեւոյթ ունեցող բան մըն է, ըսեմ երթայ, բայց վերին ատիճանի յարմար առիթ մը չէ՞ այս, և վերին ատիճանի նուիրակաւն պարտք մը չէ՞ Փաշային համար, որ, Հայ Ազգի, որ իւր ազգըն ալ է, ներկայ ճգնաժամին մէջ երբ անոր կենաց և մահու ահաւոր խնդիրը քաղաքաքիրթ աշխարհին խորհրդարաններուն և հզօր մամուլին ուշադրութեան նիւթ դարձած է, նորէն կը հարցնեմ, պարտաւորութիւն մը չէ՞, որ Փաշան Լօնտոնի ու Փարիզի մէջ ազդուապէս խօսի Հայկական խնդրոյն վրայ, իւր խօսքերով որոնք Եւրոպան ամենէն շատ հեղինակութիւն կ'ընդունի։

«Լռէ՛, սխալ, չա՛տ սխալ, յանգուգն, դիւանագիտութեան բոլորովին հակառակ հարցում մ'է այդ» վստահապէս պիտի պատասխանեն մեր մէջի դիւանագէտներու և քաղաքագէտներու բանակը, քաղաքագիտական նրբին նկատումներ, ախլօմատիան չեն թոյլատրեր Փաշային որ մեր ազգային գործերուն մասնակցի»։

Պարո՛ն դիւանագէտներ, կը ներէք, սա հարցումիս պատասխանեցէք թէ, Նուպար Փաշան ճշմարիտ հա՞յ մըն է, իրապէս հայկական զգացումներով լեցուած, հայ ամեն բանի մէջ, մի՞թէ դիւանագիտական նկատումնե՞րն են որ զինքը կարգիլեն ազգային դատը հրապարակաւ պաշտպանելէն, եթէ այո՛, կը ներէք որ ըսեմ, բան մը որ կայ աշխարհիս մէջ ամեն անձնական, դիւանագիտական նկատումներէ վեր, ան ալ ազգասիրութիւնն է։

Անգլիայի դիւանագէտներէն ոմանք, բոլորովին հակառակ կուսակցութեան մը վերաբերելով հանդերձ, Հայկական, Սասունական խժդժութիւններու խնդրոյն առթիւ միաձայնեցան Տ. Կլատսթոնի և իւր համախոհեան, յայտարարելով թէ Սասունական սրտաճմլիկ ողբերգութիւնը, ահարկու կոտորածը կուսակցական և դիւանագիտական նկատողութիւններէն վեր է, և չէ՞ մի որ, նոյն իսկ Տ. Կլատսթոն ալ ասոնց հետ միասին յայտարարեց թէ յաւէտ մարդասիրական ու քրիստոնէական լայն զգացումներէ ու պարտականութիւններէ ստիպուած են համակրիլ Հայաստանի հալածուող ժողովրդեան։ Եթէ օտար դիւանագէտները մեր խնդրոյն համար մարդասիրական զգացումներով կը գործեն, Նուպար փաշան ալ անպատճառ պէտք է դիւանագիտական նկատառութենէն գերադասէ հայրենասիրական գոնէ մարդասիսական զգացումները։

Ինծի անանկ կուգայ որ օգտակար կրնայ լինիլ եթէ Եւրոպայի հայ գործիչները հաւաքական դիմում մ'ընեն Փաշային եւրոպայ եղած միջոցին, և հաւասարապէս օգտակար կրնայ լինիլ եթէ Եգիպտոսի հայ գաղթականութիւնն ալ նոյն իմաստ հանրագրոցթիւն մը մատուցանէ Նմին Վսեմութեան։

Եւ եթէ «Եգիպտոսի Մեծ Ծերունին» խղէ իւր լռութիւն և մխիթարիչ ու ազդարար ձայն մը արձակէ դէպի իւր թշուառ ազգը, ինքը այն ժամանակ «Հայաստանի Մեծ Ծերունին» կը ճանչցուի։

ԱՐԱՄ

ՆԱՄԱԿ ԲԱՂԷՇԷՆ

ԱԱՏՈՒԱԾ ԵՒ ԻՄ ԶՕՐՈՒԹԻՒՆՍ

Բաղէշ, 23 Ապրիլ, 1895

Երբ անկարելի եղաւ Սասնոյ կոտորածը իսպառ ծածկել, կառավարութիւնն ամեն ճիգ թափեց և կը թափէ գէթ ինքզինքն արդարացունել և եղածը Բրդաց վերագրել։ Այն հաւատքն ունիմք թէ յայսմ ևս չպիտի յաջողի զի ամենակարող կաշառքն անկարող դարձած է։

Տեղւոյս Լուսաւորչականաց և Բողոքականաց միջև եղած սէրն անպատումէ։ Անցեալ ձմեռ երբ Ամերիկացի միսիոնար Մր. Նափ մեռաւ, քաղաքիս բոլոր քահանայք, դասատուք, աշակերտք և հասարակութիւնն (2,000է աւելի բաղմութիւն

մը) թաղման հանդիսին ներկայացան և մասնակցեցան։

Խիզան գաւառի Շէյխն իւր աշիրաթն շուրջն հաւաքեց զՀայս ջարդելու դիտաւորութեամբ. նոյնպիսի միտք մի Մշոյ Թրքաց մէջ յղացաւ, բայց քննչաց ներկայութիւնն արգելք եղաւ։ Կառավարութիւնն յաջողեցաւ համոզել զՇէյխն և զԳրգռեալ Թուրքս թէ այդպիսի մի արարք եւրոպական պատուիրակաց ներկայութեան աննպաստ կը լինի Իսլամաց։

Սասնոյ զոհերու թիւն 12,000 կը հաշուի. այս հաշիւէն դուրս է Մշոյ դաշտի, Բուլանըգի և Ախլաթի ցիրուցան մեռելոց թիւն, ասել կ'ուզեմ տարբեր տեղերու և ժամանակներու մէջ ի Քրդաց սպաննուածներու թիւն։

Ցուսոյ և անյուսութեան մէջ կ'ապրիմք։ Աստի անտի մեզ հասած խրախուսիչ լուրերն պահ մը կը կազդուրեն մեր նուաղկոտ սրտերն. բայց երբ աչք կը դարձուենք շուրջերնիս ու կը դիտենք բազմութիւն մը նօթի, տկլոզ, անտէր և անտուն չուառներու, և կը նկատենք մեր հեռակայ եղբարց և Եւրոպիոյ դանդաղութիւնն, մի սև ամպ մթագոյն քան զառաջինն կը պատէ զմեզ։

Հաստատ հաւատացած եմք թէ եթէ քննիչ յանձնախմբոյ մեկնելէն առաջ մի բարւոքում չլինի մեր վիճակին, նոցա մեկնելէն վերջ կատղած Թուրք խուժանն մեզ խպառ ոպուռ ջնջելու փորձեր պիտի անէ։ Սակայն մենք ևս որոշած եմք Սասուցւոց մեզ կտակած գէնքն վար չդընել ցվերջին չունչ։ Ահա մեր նշանաբանն «ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԻՄ ՁՕՐՈՒԹԻՒՆ։» Զանք մենէ յաջողութիւն յԱստուծոյ։

ԽՂՃՈՒԿՆ

ՆԱՄԱԿ ԲԱՐԻԶԷՆ

Բարիզ, 9 Մայիս, 1895

Փառաւոր էր Հայկական միթինկն ի Սէյնթ Ճէյմս Հօլ ի Լոնտոն։ Անգլիական ազգն աներկբայ կը համակրի մեզ, ինչպէս տեսնուեցաւ եռանդալիր ճառերէն զոր ականաւոր անձինք խօսեցան։ Իսկ Գաղղիացիք, ընդ հակառակն, կը հաւաքին և մեծ յանձնաժողով մի կը կազմեն վասն կառուցման ի Բարիզ մի մահմետական մզկիթի՝՝՝ և այս այն գաղղիացի ազգն է որ ինքզինք միշտ անուանած է Protecteur traditional des chretiens d'Orient։ Վատ շահախնդրութիւնն ու անմիտ քաղաքականութիւնն ի՞նչ այլանդակ և անպատիւ գործեր ընել կուտան անհատից ինչպէս և ազգաց։ Եթէ Գաղղիոյ կառավարութիւնն այժմու անգլիատեաց քաղաքականութիւնն չբռնէր, մեր խնդիրն շատ աւելի շուտ և լաւ կը գտնէր լուծում։

Լոնտոնի միթինկին Բարիզէն չորս անձինք գնացին ներկայ գտնուելու, որոց երկուքն իբր ներկայացուցիչք Բարիզու Հայ Գաղթականութեան և էին Տեարք Յ. Թ. Գայաեան և Եր. Շնորհք։ ԲՍՐԻՉՑԻ

ՑՅԼ ԵՒ ՑՅԼՔ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՑՑՆ ԱՌ ՁԱՐՆ։ Մոսկուայէն Մայիս 4ին կը հեռագրեն թէ Զարն հաւանած է ընդունիլ զԽրիմեան Հայրիկ, Հայոց Կաթողիկոսն, որ հետամուտ է Զարին դիմում մ'անել Նորա պաշտպանութիւնն խնդրելու Թուրքիոյ Հայոց համար։

Լոնտոն Յունիս 10. — Մոսկուայէն կը հեռագրեն թէ Կովկասեան բանակին 20րդ բաժինն ի Կարս և այլ սահմանագլխեան կայաններ եռթալու հրաման ստացած է։ Այս անակնկալ շարժում մեծ զարմանք պատճառեր է։ Կը կարծուի թէ ասի Հայկական Խնդրոյն հետ կապակցութիւն մ'ունի։ Հազար գօրք ալ ի Պաթում յղուած են՝ ի գօրացունել ռուսական ոյժն Հայաստանի սահմանագծին վերայ։

Ապտ-էլ-գատիր շէյխն, ըստ Էսոշիէյթէտ Փրէսի թղթակցին, գրած է վերջերս Կ. Պոլսէն առ իւր եղբայրն ի Քիւրտիստան թէ Սուլթանն զինքն հրամանատար կարգած է Համիտիյէ գնդոց և մաս մ'ալ կանոնաւոր գօրաց, և թէ մեծ պատերազմ մի պիտի լինի յորում ինքն և իւր զօրք պիտի առնուն զԿարս Ռուսիոյ ձեռքէն։

Կ. Պոլիս Յունիս 8. Թուրք նախարարութիւնն այսօր հրաժարեցաւ և նոր դահլիճ մի կը կազմուի Սաիտ Փաշայի մեծ վէզիրութեամբ։

Կ. Պոլիս Յունիս 10.— Սաիտ Փաշա մեծ եպարքոս անուանուած է, Ներքին Գործոց Նախարար՝ Բիֆաաթ Փաշա, պատերազմական գործոց՝ Բիզա Փաշա, Արտաքին Գործոց Նախարար՝ Թիւրխան Փաշա։

Յունիս վեցին Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ, Արաբներն քանդեր են Հնտախտի հիւանդանոցն ի Ճիտտէ։ Թուրք պահապան զօրաց թիւն աւելցեր է անդ, սակայն օտարականք ի նաւս ապաստանած կը մնան մինչև որ եւրոպական մարտանաւերն ժամանեն։

Թուրք կառավարութիւնն յանձն առած է տուգանք վճարել Ֆռանսացի նաւազին որ վիրաւորուած էր մի թուրք սպայէ, և սա պիտի դատուի ու պատժուի եթէ յանցաւոր գտնուի։

Արաբներու խումբ մի Ճիտտէյէն դուրս պտոյտի ելած հիւպատոսներուն վերայ կրակ են արած, կ'ասէ Մայիս 30ին հասած հեռագիր մի։ Բրիտանական փոխհիւպատոսն սպաննուեր է, բրիտանական հիւպատոսն վիրաւորուեր է և ռուսական ու Ֆռանսական ներկայացուցիչներն վէրք առեր են։

Սուլթանն դեսպանաց խոստացեր է ոճրագործներն պատժել։

Յունիս 3ի հեռագիրն ծանոյց թէ 17 անգլիական մարտանաւեր Պէյրութի առջեւ հասած են։ Բ. Դուռն կ'ասէ թէ անգլիական նաւատորմղին այցելութիւնն ի Պէյրութ մասնաւոր նպատակ մի չունի, և ո և է կերպով հանրային անդորրութիւնն վրդոված չէ ի Սիւրիա։ Սակայն ուրիշ աղբիւրներէ ծանօթ է թէ Սիւրիոյ մէջ ամիսներէ ի վեր սպառնալից վիճակ մի կը տիրէ և քրիստոնեայք չարդի վախ կը կրեն։ Սիդոնի և Լաթաքիոյ կողմերն խռովութիւնք տեղի ունեցած են, քրիստոնէից տներ քարկոծուած են և բռնի ուրացումներ իսկ պատահած են և ոչ սակաւ սպանութիւնք։

Թուրք ոստիկաններ Մշոյ մէջ երեք տէրութեանց ներկայացուցիչներու բնակարանն բռնի մտած և նոցա հայ սպասաւորն ձերբակալել փորձած են։ Այս բարբարոսութեան դէմ ևս բողոքած են։

Լոնտոնի «Կրէֆիքն» Յունիս 5ին Պէյրութի քրիստոնէից կողմէն մի աղերսագիր հրատարակած է ուղղեալ առ Եւրոպա ընդդէմ Թրքական հարստահարութեան՝ կոտորածի՝ աւազակութեան և բռնաբարութեան որք կը կատարուին Դրան տիրապետութեան այն բաժնին մէջ։ Աղերսագիրն կը պնդէ թէ մինչև իսկ քրիստոնեայ եպիսկոպոսներ կաչառուած են Դրոնէն ի ծածկել իրաց վիճակն։

Հասկացուած է թէ ԹԱԳՈՒՀԻՆ աղդեցութիւն կը գործէ գահլճին վերայ յստակ խրատով, որ գոգցես հրահանգի կը հաւասարի, նկատմամբ Դրան կացին։ Ն. Վեհափառութեան հոգածութիւնն այնքան ջերմ էր որ իրեն հեռագրել տուաւ ամբողջ պատճէնն այն պատասխանին զոր Սուլթանն տուած էր տէրութեանցն՝ անմիջապէս երբ Սըր Ֆ. Բըրէ ընդունած էր զայն։ Կը կարծուի նաև թէ իւր անձնական նամակաց մէջ առ Զարն՝ Թագուհին հաղորդած է միաբան գործողութեան կարեւորութիւնն այս խնդրոյն մէջ։ ԹԱԳՈՒՀԻՆ եռանդուն թրքատեաց մ'է ելած։ Նա շատ գրգռուած է հայկական խժդժութեանց պատմութենէն և իւր սահմանադրական պաշտօնի սովորական սահմանէն անդին անցած է։

Լոնտոն Յունիս 8. Հաղորդագրութիւնք կը շարունակեն Լոնտոնի, Բեդրպուրկի և Բարիզի միջև նկատմամբ միացեալ գործողութեան որուն դիմելիքէ եթէ դուռն յամառի մերժել երեք տէրութեանց պահանջն վերաբերութեամբ Հայաստանի։ Եթէ դուռն յամառի մերժել պահանջուածն, վերջնապէս կարգադրուած է որ պահանջներն անգամ մ'ևս ներկայացուին իրրեւ վերջնագիր, և նշանակել որոշ պայմանաժամ ընդունելու զայնս կամ մերժելու։ Իմացուած է թէ Անգլիա կ'առաջարկէ որ երեք տէրութեանց նաւատորմիղքն նաւային ցոյց մի անեն ի Կ. Պոլիս եթէ Բ. Դուռն մերժէ պահանջուածն, սակայն Ֆռանսա և Ռուսիա լաւ ևս կը համարին նախ եւրոպական տէրութեանց դեսպանաժողով մի գումարել։ «Սփիքըր» կ'ասէ թէ դիւանագիտական ճնշման մասին երեք տէրութեանց ներդաշնակութիւնն կատարեալ է։ Եթէ լինի որ Ֆռանսա և Ռուսիա չուզեն աւելի առաջ երթալ, բրիտանական նաւատորմի-

ղի մի երեւումն ի Կ. Պոլիս կրնայ հարկաւոր դառնալ, գոնէ թրքական յարուցում մի խափանելու համար։ Լրաթերթն կը յաւելու թէ հանրային կարծիքն յԱնգլիա պիտի ստիպէ զկառավարութիւնն յառաջ երթալ միայնակ։ Դիւրին պիտի լինի նախ և յառաջ գրաւել զՄիթիլէն և զՍամոս և պայնս ու զԿիպրոս ամենայն խարիսխ գործողութեանց, թէպէտ և պատահական արդիւնքն կրնայ քայքայել զՕսմանեան Պետութիւնն։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Կը խնդրուի ՀԱՅՐԻ Ռումանիոյ և Պուլկարիոյ պատուարժան բաժանորդներէն կամ բաժանորդ գրուիլ փափաքողներեն, որ հաճին փութացնել իրենց բաժանորդագներն Տիար Գառնիկ Տէօքմէճեանի, մեր գործակալին ի Ռուսճուք։

Ամերիկացի ծովապետ Քիրքլէնտ, որ Իսկէնտէրունէն գրած էր թէ Սասնոյ կոտորածն ապացուցանել չէր կրցած և Ն. Ե. ի չարախորհ Հէրալտն փութացած էր հրատարակել զայն, բաւական խիստ քննադատութեան տեղի տուաւ։ Տիկին Julia Ward Howe նամակ մի հրատարակեց Թրիպիւնի մէջ և ցոյց տուաւ թէ որքան արտառոց բան էր Սասնոյ լեռներուն մէջ կատարուած կոտորածին ապացոյցներն փնտռել չորս հարիւր մղոն հեռուն՝ ծովեզերեայ քաղաքի մի մէջ։

MISS ALICE STONE BLACKWELL որոյ անունն Հայոց Պատմութեան մէջ պիտի արձանագրուի իբրեւ միոյն ի մեծագոյն ախոյեանից հայ դատին, գրեց Պոսթոնի Տէյլի Էավրթայզըրին և քաջ տրամաբանութեամբ ջախջախեց Քիրքլէնտի անհեթեթ յայտարարութիւնն։ Բանիբուն Օրիորդն յօդուած մ'ալ Պոսթոնի Փոսթին մէջ հրատարակեց հերքելով նոյն թեոթի մէջ պատմուած մի տեսակցութեան թիւրութիւններն զորս մի հրէայ բժիշկ, Սուլթանին հպատակ, ժպրհած էր ժայթքել Հայոց դէմ։ Թեթեւամիտ հրէային կողմէ ի մէջ բերուած է մի ուրիշ իրեն նմանի խօսքն թէ «Հայք տկար ցեղ մ'են և դարերով կառավարուած են ուրիշներէ ըստ որում հասկցուած է թէ Հայք չեն կարող իրենք զիրենք կառավարել։» Օր. ՊԼԷՔՈՒԷԼ այդ յայտարարութեան դէմ կը դնէ մի համբաւաւոր մատենագրի, Փր. ՃԷյմս Պրայսի, ծանրակշիռ վկայութիւնն թէ Հայք «զօրաւոր ցեղ մ'են ոչ միայն ուժեղ ջղերով և դնդերօք, այլ և նշանաւոր ուղեղային կարողութեամբ։ Եթէ նայիք Բիւզանդեան կայսրութեան տարեգրութեանց, պիտի տեսնէք թէ շատ շատքն այն զօրավարաց ու պետական որերոյ որք նորա ծառայութեան մէջ երեւելի հանդիսացան յառաջին միջին դարս, էին հայ ցեղէ։ Նոյնպէս էր յետ թրքական տիրապետութեան հաստատմանն յԵւրոպա։ Թրքական ծառայութեան մէջ քան զամենայն կարող պաշտօնէից շատքն հայ են եղած ծննդեամբ կամ զարմով։ Նոյնն ճշմարիտ է ռուսական ծառայութեան մասին։»

Օրիորդ ՊԼԷՔՈՒԷԼ ատենապետ և Տիկին Պարօզ քարտուղարն է այն յանձնաժողովոյ որ նպատակ ունի հայերէն գրքեր անգլիերէնի թարգմանել տալ և հրատարակել։ Յանձնաժողովոյ հրաւէրն առ հայ գրագէտս կը հրատարակեմք յաջորդ թուով։

Իբր 40 հոգիէ բաղկացեալ խումբ մի Հայեր ու իրենց բարեկամ Ամերիկացիներ անակնկալ այց մի տուին Յունիս 1ին առ Օրիորդ ՊԼԷՔՈՒԷԼ, նմա նուէր տանելով հայկական մի ժամացոյց գեղապաճոյճ։ Տ. Կիւլէզեան նուիրման ատենախօսութիւնն արաւ, հայերէն երգեր և հայկական նուագածութիւն լսուեցան, Տիկին Իզապէլ Պարօզ և Տեարք Կէրրիսըն ու Հէնրի ՊԼԷՔՈՒԷԼ ատենախօսեցին։ Բանաստեղծ օրիորդին պատասխանն առ խումբն եղաւ լուիկ և համեստափայլ շիկնումն։

ԱԹԷՆՔԷՆ Մայիս 27ին կը հեռագրեն թէ մի քանի հայ ապաստանեալք ձերբակալուած են հոն անհրաման մի լրագիր հրատարակելու ձեռնարկած լինելով։ Թուրք դեսպանն ամբաստանած է զնոսա իբրեւ սայոդ մրագրողներ ընդդէմ Սուլթանին։

ՎԱՆԷՆ Մայիս 25ին գարնուած հեռագրի մի համեմատ 15 հայ աւազակներ (՞) որք ծպտեալ իբր Քուրդ սահմանն անցեր են Մահմուտիյի մօտ, ձերբակալուեր են։ Մարթինի և Պէռատան հրացանօք զինուած էին նոքա, վեց ռիվէլվօրօք և 979 փամփշտօք։ Ունէին նաև գրեան և յեղափոխական յայտարարութիւններ։ Նոցա մէկ իլդաւորն 3,000 հրացան գնած է վերջերս Հայոց բաշխուելու համար, սակայն չէ յաջողած փոխանցել զայնս ի Թուրքիա։

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ. Ս. ԴԱԲԻԷԼԵԱՆԻ

ԱՔՈՒԵՍՏ

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան։ Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստն, արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ։ Քսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան.— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈԼՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՁԱՅՆԻ ՁՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէսպէս ՁԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք։

Գինն է 2ուկէս ֆրանք կամ 1 ռուպլի (50 սէնթ։) Ութածալ 120 երես։ 1891

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՒԱՌՆԱՆՔ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՑՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ։ Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային խէկանի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես։ 1894

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ՁԷԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐ է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ՁԱՐԿ, ՆԵՐԲԻՆ ՎՏԱՆԳՔ, ԲԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆԲԻ ՈՒԺՈՎ։ Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 71 երես։ 1893

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՊԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայկական խնդիրն այլ ևս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է։ Հետևապէս հարցն այն չէ թէ կարո՞ղ եմք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարո՞ղ եմք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իբրեւ ազգ։ Զերկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս զերկնաւորն, բռունք յափշտակեն։ Արտաքին ճշմարիտ աջակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զինեալ աջ մեր բարձրացունեմք։ Ոչ թէ բան մ'ասելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես։ 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, *Սպառած։*

ՀԱՅ ԲՈՂՈՔԱՊԱՆՈՒԹԻՒՆ

ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անջատ կազմաւորման առաջնորդող սխալ քայլերն պատմաբանելէ յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով հայ ազգային հանդամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որ դեգերեն որ կարենայ իբրեւ մաքրուած և ազգային եկեղեցւոյ տիպար նկատուիլ ազգին լուսամիտ մասէն։

Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 61 երես։ 1888

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի տարին 300 թիւ։ Օտար երկրաց համար տարեկան բաժանորդագինն է 25 ֆրանք կամ 5 տոլար։ «ՀԱՅՐԵՆԻՔ» Թրքահայոց լաւագոյն լրագիրն է։ Հասցէն է —

Le Journal HAIRENIK,
Galata, Constantinople, Turquie

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄՇԱԿի տարեկան բաժնեգինն է 5 տոլար Հասցէն է "խմբագրութիւն Մշակի" (MSCHAK) Թիֆլիս, Կովկաս, Ռուսիա։ ԱՐՁԱԳԱՆՔԻ ևս պայմանն ու հասցէն նոյն է։

Մեր նշանաւոր ուսումնական թերթերն են ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ և ԲԱԶՄԱՎԷՊ։ Տարեկան բաժնեգին իւրաքանչիւրին է 2 տոլար։

ԲԱԶՄԱՎԷՊԻ հասցէն է,
Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅի հասցէն է,
Redaction du HANTES,
Convent Mechitariste.
VIENNE, AUTRICHE

Լ'ԱՌՄԷՆԻ-ԱՐՄԷՆԻՈՑ բաժնեգինն է 3 տոլար 75 սէնթ. Հասցէն է—
33 De vere Gardens W, LONDON, ENG.

«ԱՐԱ»ի Տարեկան բաժնեգինն է երկու տոլար․
Հասցէն է․ Editor of ARA,
Chogda, Bengal, INDIA.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ուրախ եմք ծանուցանելու մեր Ամերիկաբնակ ազգայնոց թէ Անգլիերէնէ աշխարհաբար Հայերէն նոր և ընտիր բառարան մի ի լոյս ելած է ի Կ․ Պոլիս, աշխատասիրութեամբ Բրոֆ․ Վ․ Յ․ Յակոբեանի։ Աւելի քան 55,000 բառ կը պարունակէ 728 երեսօք։ Բառարանէ կազմեալին գինն է 12 ֆրանք, ընտիր կազմինն՝ 13 ֆրանք։ Վաճառման միակ կեդրոնատեղին է Հրատարակչին, Զարեհ Թորոսեանի գրատունն, ի Կ․ Պոլիս, Պահչէ-Գաբու, Թիւ 4, ուր պէտք է յղուին ամեն յանձնարարութիւնք։ Ամերիկայէն կարելի է յանձնարարեալ նամակի ծըրով 2ուկէս տոլար թղթադրամ յղել մէկ օրինակի համար, կամ 5՝ տոլար երկու օրինակից համար։

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետևեալ գներով․
Ա․ տարի, 1 *տոլար* 50 *սէնթ կամ* 7․5 *ֆր․*
Բ․ ,, 2 ,, *կամ* 10 *ֆրանք։*
Գ․ ,, 2 ,, ,, ,, ,,

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեան նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ․

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄՆ կրնայ գնուիլ թղթակազմն 60 սէնթի, լաթակազմն մէկ տոլարի, բուն հրատարակչէն, և կամ, ի մեծագոյն դիւրութիւն մեր հայրենակցաց, մեր ազգային Տոքթոր Այվազեանի դիմել, սապէս․—
Dr. A. Ayvazian
424 West 57th St., New York, N. Y.

MORRISON & Co.

ԴԵՐՁԱԿ

106 Fulton St., New York

Ամառուան համար ընտիր ձեռք մի զգեստ, ձեր վրայ յատկապէս ձեւուած չափուած կը շինեմք 16 տոլարի, իսկ առանձին զգեստ (փանթոլոն) 4 տոլարի։ Ձեւին կատարելութիւնն ու ճշդութիւնն կերաշխաւորենք։

ՀԻՆ ԱՇԽԱՐՀՆ ՓՈՂ ՈՒՂԱՐԿԷ ԱՄԷՐԻՔԸՆ ԷՔՍՓՐԷՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԻ ՕՐՏԸՐՈՎ

(American Exprss Co'.s Money Order)

Կատարելապէս ապահով են։ Այդ ընկերութեան ո և իցէ օֆֆիսէն կրնաս առնուլ հետևեալ պայմաններով վճարելի յԵւրոպա․

Ոչ	*աւելի*	*քան*	5 *տոլար*		5 *սէնթ*
,,	,,	,,	10	,,	8
,,	,,	,,	20	,,	10
,,	,,	,,	30	,,	12
,,	,,	,,	40	,,	15
,,	,,	,,	50	,,	18
,,	,,	,,	100	,,	30

LES NOUVELLES D'ORIENT
(Ֆռանսերէն շաբաթաթերթ հակաթուրք)
կը բաղկանայ 8 *երեսէ*
տարեկանն է երկու տոլար
Հասցէ— 80 Rue de Bondy, Paris.



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵՄՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս չատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ՚երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանջ ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և չատ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ՚է։ Ասոր ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ուէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին։

D. M. SH[illegible] SHAN
41 Exc[illegible]ıge St., Worcester, Mass.

BUSH & Co.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

(Հաստատեալ ի 1849)

65 Front St., Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

CHEVOLA & BARALDI,
successor to
LANTELME'S RESTAURANT
40 Union Square
(East side)
Bet. 16th and 17th Sts., NEW YORK.

ԱՅՍ ՃԱՇԱՐԱՆՆ ԸՆՏԻՐ ՖՌԱՆՍԱԿԱՆ ՃԱՇԱԿԱՒ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

NEUMANN BROTHERS

Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի

5 և 7 E. 10դ Փողոց

5դ Էվիւնիւի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տոլարով, անունն ալ Հայերէն գրելով։ Կը կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տեսակ գրքեր.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to MUNN & CO., who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A Handbook of Information concerning Patents and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the Scientific American, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. $3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվիւնիւ Նիւ Եորք

26դ և 27դ Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ